Հայրենի տներ Գեորգ ծեր երիցու՝ մօտ 'ի կարուց գուռն յԱնի։
Հայրենի տուն գլուխին կրօնաւորի 'ի Քարափանն։
Կշպակ վաՀրամայ 'ի զարմինայ փողոցին մօտ 'ի Սուրբ գրիգոր։
Պարտէզ Արքահամու 'ի բերդին, և
Հայրենի տներ Սարգսի 'ի ռաՀ ձորին դրան վանացըս։
Ուռուտ Արշաւրի Աղցեցւոյ։
Ծաղկոցի կէսն խոսրովեանց՝ յիշատակ փոշուտին։
Ծաղկոց մի խաչիկ երիցու։
Տներ շուշիկ տիկնոջ զուգակցին խոսրովու՝ նուիրեալ 'ի Սուրբ յովՀաննէս։
Այգի մի 'ի փարպի յիշատակ Բարդուղիմէոս Աբեղայի։
Ջուղանկ գիւղ իւր Հողովն և ջրով. յիշատակ Քոթիթ ձոնի և կենակցի նորին ՇաՀմամայի 'ի Սուրբ ՅովՀաննէս։
Կէս գանկ(գիւղ)'ի մարաց մարզին՝ յիշատակ Իգնատիոսի 'ի Սուրբ յովՀաննէս։
Տուն երկու Գրիգորի որդւոյն Բախտիարին ընծայեալ Սրբոյն յովՀաննու։

Կշպակ երեք 'ի նմանէ 'ի յիշատակ որդւոյ նորա Աւագխաթունին։

(Շահ–Նազարեան)։

## ՑՕԼԱԿԵՐՏԻ ԱՐՁԱՆԱԳԻՐՔ

Ներկայ ստորագրութեամբս կ'ցանկամ որպէս Արմաւիր Քաղաքի տեղւոյն և դրութեանն, նոյնպէս և միւս երբեմն երեւելի Հայաստանի քանի քաղաքաց ներկայ դրութեանցն ծանօթացնել մեր ազգի ընդՀանրութիւնն, այնէ, Երուանդաշատ, Երուանդակերտ, Ցոլակերտ, Բագարան, և այլն. որով որպէս ես տեսնելովս՝ նոյնպէս և Ազգի բանասէրք լսելով՝ մի խոր մտածենք թէ՝ մեր Ազգը անուսումնութեամբն և անմիաբանութեամբն որքան բարձր և փառաւոր վիճակից՝ ցոր աստիճան խոնարՀած է, և բազմամարդ քաղաքներ ամայացած՝ աստ և անդ ցրուելով. վասն զի՝ Ազգային ընդՀանուր և մասնաւոր պատմութիւններն իսկ՝ բացայայտ կը քարոզեն, որպէս և Նզիշէ քաջավարժ Պատմիչն՝ Սուրբ Վարդանանց մեծ պատերազմի պատմութիւն գրելոյ միջոցին՝ տեսել է և ալինդ զգացել է երկպառակութեանն մեծամեծ չարիքն ու վնասն, և Քրիստոնեան սիրոյ և սուրբ միաբանութեան չափազանց և շատ ու շատ բարիքն ու օգուտն. ասուտի և կ'ասէ. Զուգութիւնն է մայր բարեաց, իսկ անզուգութիւնն ծնող չարեաց. թէ և ամենատատողորմութեամբ Տեառն Աստուծոյ՝ աՀա կխաղաղական ընթացքի շրջանը կը մտնենք, որ մեր Ազգը ամենայն տեղ կ'վայելէ խաղաղութիւն, մանաւանդ ներկայ ժամանակիս, և յատկապէս այս քանի տարիներս՝ շնորՀիւ մեծազօր Տէրութեանն Ռուսիոյ և մանաւանդ անխոնջ աշխատակրութեամբ Հասարակաց Հօրն մերոյ՝ Վեհափառ Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի ամենայն Հայոց. որ յօրէ վերամբառնալոյ յԱթոռ փառաց սուրբ Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի — յԱթոռ Հայրապետութեան Սուրբ Գրիգորի Լուսաւորչին, քան զամենայն ինչ քաղցր Համարելով Ազգի ծանր ծանր Հոգսերը կրելն՝ իւր մեծամեծ և ԱզգաշաՀ քանի քանի գործքերովն՝ ըստ Մագիստրոսեան գրուածոյն՝ Ազգը իբրև իւր աչքը սիրելով. կ'խնամէ, կ'Հոգայ, և կ'ջքնի միշտ խորՀրդով, բանիւ, և գործով առողջացնել Ազգի բարոյական տկարութիւնն՝ ուսումնարանաց և Դպրոցաց միջոցաւ դեղ և դարման Հասուցանելով՝ իբրև քաջ և ճարտար և սրտացաւ բժշկի։ Այս մասին ժամանակի ողջամիտ և ճշմարտասէր գրիչներն անմաՀ յիշատակաւ կ'արձանագրեն — մենք մեր ստորագրութեան շարունակութիւնն գրենք։ — ԱՀա կը Հաղորդեմ 'ի Ցօլակերտ (Տաշբուռուն) գտնուած բեւեռաձեւ գրոց առաջին և վերջին այսինքն 1 րդ և 24 րդ տողերի ձեւն, որ ըստ արձանագրական կարգին պէտք է թուականն լինի. որպէս զի՝ այս արձանագիրն ես Արմաւիրեան արձանագրոյ նման անյայտ չ'մնայ ուսումնականներից. և ժամանակին ցանկացողք կարողանան գտնել, օրինակել և կարդալ. ուստի միայն 2 տողերն գրելով, այս է դիտաւորութիւնս՝ որ խնդրեմ ցանկացողաց այս արձանագրութեան տեղին եւ, թէ և ամենայն տեղ գտածներս՝ ցայսօր մնացել են ըստ ամենայնի անՀասկանալի։

